ներմուծելլի բարենորոգմանց խոստումը ի կատար հանելու մասին։

Պատմութիւնը կրկնւում է շարունակ, և ինչպէս որ 1862-ին Թուրքիոյ մեծ Եպարքոս հռչակաւոր Ալի բաշան պատասխանեց մի անկեղծ և բարեսիրտ կուսակալին—Խայրէդդին բաշային—«Դուք բոլորովին պիտի չհամարձակուիք պետական պօլիտիկային մէջ խառնուելու» այսպէս էլ առաջին մինիստրը մեծազօյն Բրիտանիոյ խստիւ մեղադրեց հարիւրապետ Ե. Գ.-ին Անգլիոյ Պետական պօլիտիկային մէջ խառնուած լինելուն համար, նրան յիշեցնելով որ ինքը ուղարկուած էր իբր ներկայացուցիչ Մեծն Բրիտանիոյ և միշտ աչքի առաջ ունենալու էր Անգլիան շահերը և ոչ եթէ ինչ անելու մասին խորհուրդներ տալու էր պետութեան։

Sapienti sat.

---

## ՊՈՍՏ—ԱՐԿՂ

—

ՖՐԱՆՍԻԱ. տ.-ին—Դուք գրում էք թէ դաշնակցութիւնը բօյկոտ է հրատարակել «Մուրճի» դէմ։ Բացարձակ այդպիսի կարգադրութիւն ինձ անյայտ է, իսկ դրանց բիւրօկրատիայի գաղտնի հրահանգների և շրջաբերականների մասին գուցէ գիտեն՝ ձեզ այդ բանը հաղորդողները։ Չգիտեմ ովքեր են այդ պարոնները, սակայն եթէ իմ ենթադրածներն են, այո—նրանք մօրձաւոր կապեր ունեն այդ ազգային բիւրօկրատիայի «բարձր շրջանների» հետ եւ երեւի, ստոյգ գիտեն։

ՍԱՐԻՂԱՄԸՇ. պ. կ. Պ.—Ձեր ճաշակով «ազգային» վէպեր եւ բանաստեղծութիւններ չենք տպում։ Եթէ չէք հաւանում մեր ուղղութիւնը կարող էք ձեր աշխարհահայացքին համապատասխան թերթերի, ամսագրների դիմել։ Փառք Աստծոյ, այդ կողմից «Հայ ազգը» բախտաւոր է-.. ունի մօտ 80 անուն պարբերական հրատարակութիւններ։

---

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. Սարգսեան
Իրաւատէր՝ Վ. Քանանեան

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐԻ»

Հրատարակիչ Ստեփան Մելիք Սողոմոնեանցը, յայտնում է իգիտութիւն հասարակութեան, որ «Արեան Ձայների» № 101-երդ երեսի վերջին տողում, սպրդել է մի խոշոր տպագրական սխալ, փոխանակ Թուրքասէր բուլանղցիքի պէտք է լինէր հայրենասէր բուլանղցիք, Միևնոյն ժամանակ խնդրում է գրավաճառներին և գնող անհատներին որ յիշեալ սխալը ուղղելու համար անմիջապէս կարել № 101 թերթը։ (1—1)

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## 1906 Թ.

# „ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

*(Նոր շրջան VI տարի)*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ռուսաստան և Պարսկաստան | տարեկան | 10 ր. | Արտասահման | տարեկան 12 ր. | (32 ֆ.) |
| | կէս տարին | 6 » | | կէս տարին 7 » | (18 ֆ.) |
| | ամսական | 90 կ.։ | | ամսական | (3 ֆ.) |

*Բաժանորդագինը կարելի է վճարել նա՛և մաս-մաս(5—5 ռ.), երկրորդ վճարը լինում է մայիսին։ Ծխ. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների եւ բանուորների համար բաժանորդագինն է 8 ռուբլի տարեկան, ու կարելի է վճարել մաս-մաս(4-4)ռ.։*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ Է

**Թիֆլիսում**—*խմբագրատանը (Ճամճամաձեան փողոց, տ. № 12)*
**Կայսրութեան այլ տեղերից** *պէտք է դիմել՝* Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».
**Արտասահմանից՝** Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ** *ընդունւում է ամեն լեզուով։ Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բանող յայտարարութեան համար 15 ռ., 1/2 եր. 8., 1/4 եր.—4 ռ., տողատեղ (կորպ.)—40 կ.։*

*Խմբագիր՝* ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ